ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ք. Երևան 01.03.2024 թ.

Մենք ներքոստորագրողներս՝ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տեխնիկական բաժնի պետ Հ. Սարգսյանը, «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ Տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Խոջամիրյանը և Տեխնիկական բաժնի գլխավոր մասնագետ Ա. Աղասարյանը կազմեցինք սույն արձանագրությունը այն մասին, որ «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի կարիքների համար G4 և G6 տեսակի բնական գազի մեմբրանային հաշվիչների ձեռքբերման նպատակով (№073/GArm/24_4.3_016/13.02.24 ծածկագրով) հայտարարված մրցույթին, «ՄՏԿ» ՓԲԸ կողմից ներկայացվել են Apator Metrix S. A. կազմակերպության արտադրության UG G4 և 2UG G6 տիպի գազահաշվիչների փաստաթղթերը և թվով 5 հատ UG G4 տիպի գազահաշվիչներ:

Մեր կողմից ուսումնասիրվել են ներկայացված փաստաթղթերը, ինչպես նաև 1 հատ UG G4 տիպի №05558623 գործարանային համարի գազահաշվիչը տեղափոխվել է «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ «Արմավիրի գազմաշ» ՍՊԸ՝ լրացուցիչ ուսումնասիրման և համեմատման: Նշված գազահաշվիչներից վերջին տարիներին «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից ձեռք է բերվել շուրջ 38000 հատ, որոնց մի մասը տարբեր խնդիրների պատճառով (այդ թվում առաջնային տեղադրումից անմիջապես հետո) տեղափոխվել են վերանորոգման լաբորատորիաներ: Ինչպես փորձաքննության ներկայացված գազահաշվիչի, այնպես էլ նախկինում շահագործման մեջ գտնվող գազահաշվիչների ուսումնասիրությունների (նաև կազմաքանդումով) արդյունքում ի հայտ են եկել մի շարք խնդիրներ.

1. Հաշվիչի ետպտույտն արգելող ոտիկը ետպտույտից կոտրվում է և շարունակում է համաչափ հետագա աշխատանքը (արտաքին միջամտության արդյունքում հնարավորություն է ստեղծվում չարձանագրել /նվազեցնել/ փաստացի սպառված գազի քանակը);
2. Համրման սարքի եզրերը բարակ դուրս եկած են (բորտ), այդ իսկ պատճառով թեթև հպումից կոտրվում են և կարող է առավել հաճախակի խնդիր առաջանալ տեղափոխման, արկղ հանգույցում հավաքակցման կամ ապահավաքակցման աշխատանքների ժամանակ (արտաքին միջամտություն եզրակացությունների անհարկի պատճառ կարող է հանդիսանալ);

3. Գազահաշվիչի համրման սարքը կազմաքանդելու համար պետք է կոտրել դիտապակին (հանդիսանալով արտաքին միջամտություն եզրակացությունների անհարկի պատճառ);

4. Համրման սարքը կազմաքանդելու համար նախատեսված հատուկ գործիքներ չկան, կիրառվողները ինքնաշեն են;

5. Քանի որ չափիչ մեխանիզմը ամբողջությամբ բարակ պլաստմասայից է, հետևաբար կազմաքանդման ժամանակ այն հաճախ է վնասվում, անկախ աշխատողի զգուշության աստիճանից;

6. Հաշվի առնելով 5 կետի պայմանները, անհրաժեշտ է գազահաշվիչը վերանորոգելու համար ձեռքբերել ոչ միայն դարձակալման հաստոց, այլ նաև ապադարձակալման սարքավորում;

7. Չափիչ մեխանիզմը իրանից (корпус) առանձնացնելու ժամանակ խնդիր է առաջացնում լիսեռը, որի դիրքը երբեմն խանգարում է կազմաքանդմանը և չափիչ մեխանիզմի դիրքից կախված կոտրվում է;

8. Հաշվի առնելով համրման սարքի ատամնանիվների դասավորությունը և քանակը, ինչպես նաև հաշվի առնելով նման դասավորությամբ այլ հաշվիչների (նախկինում շահագործված) հետ ունեցած փորձը հավանական է առավելագույն թույլատրելի սխալանքի չափից շեղում ավելի մեծ չափով;

9. Առաջարկվող G4 և G6 գազահաշվիչների հարաչափերը փաստացի, զերազանցում են «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ կողմից ներկայացված տեխնիկական բնութագրի պահանջներում սմրագրված առավելագույն հարաչափերին, որի պատճառով G6 տիպաչափի գազահաշվիչները շահագործվող արկղ հանգույցներում տեղադրելիս (փոխարինման նպատակով) առաջացնում են խնդիրներ՝ մասնավորապես արկղի դռնակը չի փակվում և հնարավոր չի լինում այն պատշաճ կնքել (գծապատկերները կցվում են):

Հաշվի առնելով վերոհիշյալ խնդիրները, ինչպես նաև այն, որ UG G4 և 2UG G6 տեսակի գազտհաշվիչների վերանորոգման դեպքում պարտադիր փոխվող դետալների քանակը, հետևաբար նաև վերանորոգման արժեքը ավելանալու է՝ առավել նպատակահարմար է գնումները կազմակերպելիս նախապատվությունը տալ վերանորոգման առումով առավել պարզ, մատչելի և քիչ ծախսատար, առավել երկար

ժամանակահատվածում շահագործման մեջ գտնվող գազահաշվիչներին, ուստի UG G4 և 2UG G6 տեսակի գազահաշվիչների ձեռքբերումը գտնում ենք ոչ նպատակահարմար:

«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ
Տեխնիկական բաժնի պետ — Հ. Սարգսյան

Տեխնիկական բաժնի
գլխավոր մասնագետ — Ա. Խոջամիրյան

Տեխնիկական բաժնի
գլխավոր մասնագետ — Ա. Աղասարյան

Техническое задание
ЗАО «Газпром Армения»

Техническое описание
Aptor Metrix UG G-4 и 2UG G-6

G-4



Не более 155 мм



Не более 163 мм

G-6



Не более 170 мм



Не более 177 мм

ГАЗПРОМ АРМЕНИЯ

Закрытое акционерное общество
«Газпром Армения»
(ЗАО «Газпром Армения»)

Тбилисское шоссе, 43, Ереван, Республика Армения, 0091
тел.: (374 10) 294-728, 294-933, факс: (374 10) 294-728
e-mail: inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«Գազպրոմ Արմենիա»
փակ բաժնետիրական ընկերություն
(«Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ)

0091, ՀՀ, Երևան, Թբիլիսյան խճուղի 43
հեռ.՝ (374 10) 294-728, 294-933, ֆաքս՝ (374 10) 294-728
Էլ.փոստ՝ inbox@gazpromarmenia.am, gazpromarmenia.am

«12» 03 2024 г. № 32/132/1015-2024

«ՄՏԿ» ՓԲԸ-ի տնօրեն
պարոն Ա. Եփրեմյանին

Հարգելի պարոն Եփրեմյան,

Ի պատասխան Ձեր 05.03.2024թ. գրության՝ տրամադրվում է G4 և G6 տեսակի բնական գազի կենցաղային հաշվիչների ձեռքբերման նպատակով հայտարարված №073/GArm/24_4.3_016/13.02.24 ծածկագրով մրցակցային ընտրության գնահատող հանձնաժողովի նիստերի արձանագրությունների և «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի համապատասխան ստորաբաժանման կողմից տրված բացասական եզրակացության 01.03.2024թ. արձանագրության պատճենները (կցվում են՝ 10 թերթ):

Հարգանքով՝

Գնումների նախապատրաստման
և անցկացման բաժնի պետ Ա. Խաչիկյան

Սույն գրության պատասխան օրինակը և արձանագրության [illegible] պատճենները՝ 10 թերթ:
«ՄՏԿ» ՓԲԸ Հաճախորդների բաժնի ղեկավար
Ա. Մարտիրոսյան: 12.03.2024թ. ժ 16 43